

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՈՎԱՏՓ ՕՐԲԵԼԻՆ՝ ԲԱՆԱԳԵՏ-ԲԱՆԱՃԱՎԱՐ

Նովսեփ Օրբելու գիտական փորձաքննությունը գործունեության մեջ առանձնանում է՝ հայ բանագիտության բնագավառում իրականացրած նրա անուրանալի վաստակը: Նա Մոկսի բանահյուսական ժառանգության առաջին գրառողներից է: Գրառումները նա իրականացրել է Մոկսում, դաշպային գործուղումների ընթացքում, որն էլ առավելագույնս արժևորել և արժևորում է նրա գրառած նյութերի սկզբնաղբյուրային կարևորությունը: Գործուղումը սեփական նախաձեռնությամբ չէր պայմանավորված, այլ ծրագրված էր Պետերբուրգի կայսերական ակադեմիայի կողմից: 1911 թ. Ն. Օրբելուն (ի դեպ, Ն. Մառի խորհրդով) գործուղելով Արևմտյան Նայասարան՝ նրան հետևյալ խնդիրներն են առաջադրել. հետազոտել ոչ միայն հեթանոսական, քրիստոնեական, մահմեդական հնագույն հուշարձանները, այլև բացահայտել հայ բարբառներից որևէ մեկի լեզվական առանձնահատկությունները: Մեկնելով փարածաշրջան՝ Ն. Օրբելին նախընտրեց Մոկսի գավառը: Ի սկզբանե, նա իր առջև խնդիր էր դրել՝ փորապետել տեղավայրի լեզվաբարբառային յուրահատկություններին, քերականական կառուցվածքին: Աշխատանքները նա իրականացրել է բարբառային բառերի, բանահյուսական բնագրերի գրանցման և տեղաբնիկների հետ ունեցած ամենօրյա զրույցների ընթացքում: Կարճ ժամանակ անց, նա հստակեցրեց նաև նյութերի գրառման իր սկզբունքները. առաջնահերթ խնդիրը փառադարձության յուրահատկություններին փորապետելն էր՝ պայմանավորված էր հնչյունական արտասանական նրբերանգները ճշգրտորեն գրանցելու անհրաժեշտությամբ: Նա փառադարձության հատուկ նշանների կիրառմամբ նպաստել է Մոկսի լեզվախոսակցական արտասանական հնչերանգների ճիշտ ընկալմանն ու արտաբերմանը: Բնագրերի անադարպությունը պահպանելու գլխավոր գործոն նա համարում էր բարբառային յուրահատկությունների խորքային խմացությունը: Իսկ դա հնարավոր էր իրականացնել միայն բնագրերի ծագման ու կենցաղավարման բուն հայրենիքում: Ի սկզբանե նա քննադատաբար է վերաբերվել Մոկսի բանահյուսական նյութերի այն գրառումների հանդեպ, որոնք իրականացվել են Արևելյան Նայասարանի փորհեր շրջաններում հանգրվանած մոկացիների միջավայրում: Դրանք ենթարկվել էին լեզվախոսակցական փոխազդեցությունների: Ն. Օրբելին անընդունելի է համարել բնագրերը՝ ոչ միայն գրառողների, այլև հրապարակիչների կողմից անհարկի խմբագրումների ենթարկելու իրողությունը: Նյութերի բնագրային արժեքի պահպանման կարևորության բարձր գիտակցմամբ, նա անընդունելի է համարել մասնավորապես Ա. Աֆանասևի, Ա. Գիլֆերդինգի, հայ իրականությանը հայտնի Գ. Շերենցի, Գ. Նովսեփյանի՝ բնագրերում կատարած միջամտությունները: Այս ամենը

աչքի առաջ ունենալով, մեծ ջանքերի գործադրմամբ, Ն. Օրբելին, յուրացնելով Մոկսի լեզվախոսակցական յուրահարկությունները, ձեռնամուխ եղավ բանահյուսական նյութերի գրառման աշխարանքներին: Կարճ ժամանակ անց նա գրառում է տարածանք բանահյուսական նյութեր՝ բնագրերին կից ներկայացնելով դժվարիմաց բառերի բացատրությունները: Տարծաշրջանի բանահյուսական, ազգագրական դիմագիծը կուռ է ամբողջական ներկայացնելու նպատակով նա կարևորել է նաև համարել բնակվող քրդերի հոգևոր մշակությանն արժեքներին հաղորդակցվելու, ծանոթանալու անհրաժեշտությունը: Այն պայմանավորված էր նրանց միջև առկա մշակութային, կենցաղային ընդհանրությունների ու տարբերությունների բացահայտման կարևորությամբ:

1911-1912 թթ. գրառած նյութերը նա ընդգրկել է «Մոկաց տեքստեր» աշխատության մեջ: Ն. Օրբելին հիշյալ ձեռագիր աշխատությունը սիրահոժար տրամադրել էր արժանահիշատակ ակադեմիկոս Արամ Դանալանյանին: Ծանոթանալով պատմաազգագրական, բնագիտական, բարբառագիտական արժեք ներկայացնող հիշյալ աշխատությանը՝ Արամ Դանալանյանը գրում է. «Մոկաց տեքստերի» արժեքը կրկնապատկվում է նրանով, որ այն վերջին վկայություն վավերականներից մեկն է՝ Արևմտյան Նայաստանի ծաղկուն ու շին գավառներից մեկի բնակչության լեզվի, նիստ ու կացի, աշխարանքային առօրյայի, մասնավորապես նրա գունեղ ու հարուստ բանահյուսության վերաբերյալ բնակչություն, որի ճնշող մեծամասնությունը անխնայորեն ոչնչացվեց 1914-1916 թթ. թուրքական ջարդարարների կողմից կազմակերպված արշտանքային նախնիների ժամանակ»¹: Ժողովածուն պարբերաբար էր տպագրության, սակայն Ա. Դանալանյանի վկայակոչմամբ, «զանազան պարզաբանությամբ չէր հրատարակվել նրա կենդանության օրոք»²: Արդյոք ազգային մշակութային արժեքների վերհանման հանդեպ ժամանակին իշխող կոշտ դիրքորոշումն ու գգուշավորությունն էր պարզաբան: Այն տպագրվեց նրա մահից 21 տարի անց, 1982 թ., Մոսկվայում, «Фольклор и быт Мокса» վերնագրով՝ իր երախտագրեր աշակերտ Կարեն Յուզբաշյանի խմբագրությամբ:

2002 թ. պատմական գիտ. դոկտոր, երջանկահիշատակ Պարույր Մուրադյանի խմբագրությամբ Երևանում «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց Ն. Օրբելու աշխատությունների հավաքածուն, որում տեղ են գտել նաև Մոկսում իրականացրած նրա գործողման արդյունքները: Եթե Կարեն Յուզբաշյանի հրատարակած ժողովածուում ընդգրկված են Մոկսում գրառված նյութերի միայն ռուսալեզու թարգմանությունները, ապա վերոհիշյալ գրքում ներկայացված են հայերեն բնագրերն ու դրանց ռուսերեն թարգմանությունները: Նյութերն աչքի են ընկնում ժանրային բազմազանությամբ (հեքիաթներ, գրույցներ, առակներ, վիպական երգեր («Մոկաց Միրզա», «Ասլան աղա»), աշխարանքային, հարսանեկան, ծխական երգեր (վիճակի երգերին կից տրված է նաև ծեսի ազգագրական հակիրճ նկարագիրը), «Ճոճանց խոսքերից» խորագրի ներքո ընդգրկված են առած-

1 Ա. Դանալանյան, Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985, էջ 171:

2 Տե՛ս անդ, էջ 171:

ասացվածքներ, հանելուկներ: Աշխատության մեջ ընդգրկված է նաև Մոկսի բարբառի բառարանը: Աղբյուրագիտական կարևորությամբ են պայմանավորված նյութերին կից ներկայացված ծանոթագրությունները: Գրառումների ընթացքում, Ն. Օրբելին, կարևորելով գիտարեղեկավարական աղբյուրների գրանցման անհրաժեշտությունը, ներկայացրել է նյութերի գրառման վայրի, ժամանակի, բանասացների վերաբերյալ տվյալներ: Վկայություններից պարզվում է, որ նյութերը նա գրառել է Մոկս քաղաքում, Ապրիխանանց, Անջղոնց, Տաշար (Տյաշար) թաղամասերում՝ 23 հայ և մեկ քուրդ բանասացից: Վերջինս փորապետում էր արաբներեն, պարսկերեն, թուրքերեն լեզուներին, հիանալի գիտեր ևս հայերեն: Բանասացները հիմնականում փղամարդիկ էին. նրանց շարքում նշված էր նաև Նազև Շահամիրյան անուն-ազգանվամբ կին բանասաց, որից Ն. Օրբելին գրանցել է զվարճախոսություններ³: Ծանոթագրություններից մեկում նշված են նաև իր իսկ գրառած նյութերի մոտիվային ու սյուժետային ընդհանրությունները համահայկական և միջազգային գուգահեռականներում⁴:

Ն. Օրբելին մեծ ներդրում ունի նաև հայ ժողովրդական էպոսի ուսումնասիրման, այն ժողովրդական լայն շրջաններին ճանաչելի դարձնելու գործում: Մոկսում ևս Վանում նա, մոտիկից շփվելով մոկացի գրաբանների հետ, լսել է նրանցից «Սասնա ծռերի» մասին պատումներ, իսկ Փոքր Մհերի դռան սեպագրերին ծանոթանալիս առաջին անգամ լսել է նաև Փոքր Մհերի մասին տարածված ավանդական գրույցը: «Մոկս գավառում,- գրում է Ն. Օրբելին,- ինձ ցույց են տվել Բաթմանա կամուրջը, ուր Դավիթն ընդհարվում է Մարա Մելիքի երկու փախելուսների հետ: Իսկ Վան քաղաքի մոտ, միջնաբերդից 4 կմ հեռու, տեսել եմ Մհերի հռչակավոր դուռը: Դա իրոք դուռ հիշեցնող մի քանդակ է, վիթխարի ժայռի վրա, սեպափառ արձանագրությամբ: Քարանձավի մուտքի առաջ, ժայռի մեջ, մի փոքր փոս կա. դա այն տեղն է, ուր դուռը բացվելուց առաջ անհամբերությունից սմբակով դուրս է Բուռլիկ-Ջալալին⁵: Քաջածանոթ «Սասունցի Դավիթ» վեպին՝ Ն. Օրբելին, էպոսին ի մոտո առնչվում է 1939 թ. նրա 1000-ամյակի տոնակատարության ժամանակ: Նայաստանի կառավարության հանձնարարությամբ նա սրանձնում է հորեյանական միջոցառումները գլխավորելու պարտականությունները: Նա մեծ դեր է կատարել «Սասունցի Դավիթ» համահավաք ժողովածուի (հայերեն և ռուսերեն) հրատարակման գործում (1939 թ.): Ն. Օրբելու նախաձեռնությամբ ՍՍՏՄ ԳԱ հրատարակչությունը, 1939 թ. Լենինգրադում, տպագրել է «Սասունցի Դավիթ» վեպի ռուսերեն թարգմանությունը: Նորեյանական տարվա ընթացքում Ն. Օրբելին գեկուցումներով Խորհրդային Միության տարբեր ժողովուրդների լայն շրջաններին է ներկայացրել «Սասունցի Դավիթ» վեպը: Նա նաև «Սասունցի Դավիթ», «Նայ ժողովրդի մեծ էպոսը», «Ներսիսական էպոսը» հոդվածներով է հանդես եկել Խորհրդային Միության տարբեր վայրերում լույս տեսնող թերթերում ու ամսագրերում⁶: Ն. Օրբելու նման նախաձեռնությունը

3 Տե՛ս **Н. Орбели**, Избранные труды, Ереван, 2002, с. 195-196:

4 Տե՛ս անդ, Указ. труд, с. 190-194:

5 **Ա. Դանալանյան**, Դավազներ հայ բանագիտության պատմության. «Նովսեփ Օրբելի», Երևան, 1985, էջ 159-160:

6 **Ա. Դանալանյան**, նշվ. աշխ., էջ 161-162:

պարամաշնակության կարեւորությամբ էր պայմանավորված: Այն, անշուշտ, նպաստել է Էպոսի միջազգային ճանաչմանը: Ժամանակին Պրոմեթեոսի, Արարվազի, Մհերի, Ամիրանի ավանդությունների շուրջ՝ հայերի և վրացիների միջև ծագած բանավեճերում, Ն. Օրբելին սուր քննադատության է ենթարկել վրացիների այն կարծիքը, ըստ որի՝ հունական Պրոմեթեոսը, Արարվազը, Մհերը ծագել են վրացի Ամիրանից: Ընդունելով հանդերձ, որ մարդկային բարօրությանը ծառայող, այդ նպատակի համար մարտնչող հերոս հսկայի գաղափարը բնորոշ է բոլոր ժողովուրդներին, օրինաչափ համարելով որոշ փոփոխություններ՝ փոխադարձաբար փոխառնված լինելու՝ բանահյուսությանը բնորոշ առանձնահատկությունները, Ն. Օրբելին միակողմանիությունը համարել է «յուրաքանչեւ ռուսալիստական պահանջի մի սնանկ փորձ»⁷: «Նայ հերոսական Էպոսը» աշխատության մեջ: Ն. Օրբելին անդրադարձել է Էպոսի բովանդակությանը, կերպարներին, վեր է հանել Էպոսի պարամական միջուկն ու ձևավորման ընթացքը, բացահայտել «Մասունցի Դավիթ» Էպոսի և այլ ժողովուրդների՝ վիպական համանման գրույցների միջև առկա ընդհանրությունները: Այդ աշխատությունը Էպոսագիտության բնագավառում իր ուրույն տեղն է գրավում: 1956 թ. ՍՍՄՄ ԳԱ հրապարակչությունը Մոսկվա-Լենինգրադում, Արամ Դանալանյանի խմբագրությամբ, լույս է ընծայել Նովսելի Օրբելու կազմած միջնադարյան առակների “Басни средневековой Армении” ժողովածուն:

Այսպես ուս ժողովրդական առակների վերաբերյալ կարարում է ինքնաբերական դիտարկումներ, ընդգծում դրանցում առկա որոշակի սոցիալական ուղղվածությունը, սյուժեների փոխադրվածությունը, վեր են հանված նաև առակների ժանրային առանձնահատկությունները: Ն. Օրբելին սրանման էր նաև «Նայ ժողովրդական հեքիաթների»՝ 10 հատորով նախատեսված ակադեմիական հրապարակչության ընդհանուր խմբագրի պարզականությունները: Նրա խմբագրությամբ 1959-ից մինչև 1962 թ. լույս են տեսել «Նայ ժողովրդական հեքիաթների» I, II, III հատորները: 1961 թ. վերահաս մասը խանգարեց մինչև վերջ հասցնելու իր խմբագրական պարզականությունները:

Վերջերս, ՆՆ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրապարակել է բանասիրական գիտությունների թեկնածու, բանագետ Թամար Նայրապետյանի կազմած «Նայ ժողովրդական հեքիաթների» 17-րդ (Մոկս) հատորը, որում ընդգրկվել է նաև Ն. Օրբելու՝ բուն Մոկսում գրառած 6 միավոր հեքիաթ:

Նովսելի Օրբելու բանագիտական հետազոտությունները, բանահյուսական նյութերի գրառումները երբեք չեն կորցնի իրենց արդիականությունը. դրանք, իբրև հուսալի սկզբնաղբյուրներ, օգտակար կլինեն բանագիտական բազում խնդիրների լուսաբանման գործում:

7 Ն. Օրբելի, «Մասունցի Դավիթ» Էպոսը, «Ճորճիքային գրականություն» (ամսագիր), Երևան, 1939, N 8-9, էջ 13: Տե՛ս նաև՝ Ն. Օրբելի, Նայ հերոսական Էպոսը, 1956, Երևան, էջ 105-107: